

**ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՈՒԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՃԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԵՐԹ**

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՆԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

7 օգոստոսի

ԱՄ Հայոց Արեւելյան թեմի ուխտավորներին



Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Շայրագոյն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմի ուխտավորներին՝ ուղեկցությամբ Նյու Յորքի Ս. Նահատակաց եկեղեցու հոգեւոր հովիկ Արքահամ քին. Մանուկյանի:

Տեր Արքահամը, ուխտավորներին ներկայացմելով Ամենայն Հայոց Հայրապետին, անդրադարձավ համայն հայության լյանքում Մայր Աթոռ Ս. Եջմիածինի առաջնային դերակատարությամբ եւ հայցելով Նորին Սրբության օրինությունը՝ հավելեց, որ այս այցը բացառիկ նշանակություն ունի Ս. Նահատակաց եկեղեցու

համայնքի համար:

Այսուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրապետական օրինությունն ու գնահատանքը բերեց ուխտավորներին: Վեհափառ նշեց, որ հաճելի է տեսնել՝ ինչպես են Հայ Եկեղեցու սպասավորներն իրենց համայնքների անդամներին առաջնորդում հայրենիք ու իրենց հավատքի կենտրոն U. Եջմիածին, որոնց կարոտով ու տեսիլքով, բայց սիրո ու օրինության ներք ապրում են Վերջիններս: Հայոց Հովկապետը գոհունակությամբ անդադարավ նաեւ այն գովարժան ծառայությանը եւ համագրագությա-

նը, որոնք առկա են հոգեւոր սպասավորի ու համայնքի անդամների միջև:


Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը անդրադարձավ նաեւ արցախյան հիմնահարցին: Ընդգծելով, որ հաճախ երիտասարդ ու քաջարի հայորդների կյանքի գնով են պահպանվում ազատությունն ու երկրի ապահովությունը՝ Վեհափառն աղոթեց, որ Աստծո օրինության հովանու Ներք հայոց երկիրը մշտապես ապահով լինի, իսկ հայ ժողովուրդն է ապրի խաղաղության մեջ:

Նորին Սրբությունը բարձր գնահատեց նաեւ այն ազնիվ զորակցությունը, որը Սփյուռքի հայ համայնքների կողմից ցուցաբերվեց ապրիյան քառօրյա պատերազմի ընթացքում տուժած հայորդներին՝ փաստելով, որ միասնական շաստերի արդյունքում միայն հնարավոր կյառնա դիմագրավել կյանքի բոլոր դժվարությունները:

Չրույցի ընթացքում անդրադարձ եղավ նաեւ հայապահպանության եւ ազգային ինքնության պահպանության, մատաղ սերնդի հայեցի կրթության եւ դաստիարակության խնդիրներին, դրանց լուծման կարեւորությանը:

Վերստին իր սերն ու օրինությունը բաշխելով ներկա ուխտավորներին՝ Նորին Սրբությունը հայցեց Երկանքորից, որ Ամենակալ Կստօնած զորեղ պահի ամենքի սվիրումն ու հավատքը, որպեսզի շեն ու պայծառ մասն Հայ Եկեղեցին ու հայոց կյանքը:

ՎԵՀԱՓՈՌ ՏԵՐ



Ի խորոց սրտի շնորհավորելով Ձերդ Սրբության ճնշոյան օրը՝ աղոթում ենք, որ Տերն իր խաղաղության մեջ պահի-պահպանի, երկար կյանք ու անստվեր առողջություն, հոգեկան անդորր, անսպաս ներգիա պարգևել Հայոց Հայրապետին: Աղոթում ենք, որ Ձեր կյանքի բոլոր արշալույսները ծագեն Ձեր հոգի, համայն հայության եւ Հայոց աշխարհի լուսավոր ապագայի երանելի բարձունքներում՝ արդարության, ներողամտության ու ամենաշատ սիրո ու անման հավատի մեջ:

ԴՐԱՄԱՐԱԿԵՐ Տ Սայր Աթոռ Սր Եջմիածնուն (2016 թ.)

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Շայրագոյն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրինությամբ Մայր Աթոռ Սր Եջմիածնի Յանձնական բաժինը լույս է ընծայել Արմեն Ասատրյանի՝ «Թիֆլիսի հայկական Սովորությունը, 20-րդ դարի երեւելի կովկասագետ Լեւոն Մելիքսեռ-Բեկի՝ վրացերենից թարգմանված (թարգմանիչ՝ Յազ Բայրամյան) «Վարդապետը Հայոց հյուսիսային կողմանց» – Նրանց ինքնությունը եւ «Հայոց նոր վկաները» (1155-1843) ժողովածուն՝ սվիրված Հայոց Սեծ Եղեռնի 100-րդ տարելիցին:


«Թիֆլիսի հայկական եկեղեցին» շարքի հերթական այս գիրքը հերթական այս գիրքը մի ամփոփ աշխատությունն է՝ սվիրված Թիֆլիսի երկու հեկեղեցիների տարեգության մինչեւ մեր օրերը:

Ների ցուցակը: Գրքում տեղ են գտել նաեւ տեղեկություններ եկեղեցապատկան կալվածքների եւ եկեղեցական ծխական դպրոցների գործունեության մասին:

Աշխատությունը հարուստ է ինչպես Մեսրոպ Մաշտոցի անվան Սատենադարանի, այսպես ել Հայաստանի Ազգային արխիվ-ներում պահպանված թագմաթիվ անտիկ վավերագրերով, նախախորհրդային մամուլի և սյունական լուսանկարներով:

Իսկ անվանի կովկասագետի «Վարդապետը Հայոց հյուսիսային կողմանց» եւ Նրանց ինքնությունը՝ Երկը 1928 թվականին վրացերենով լույս է տեսել Թիֆլիսում: Նեղինակը հետագույնը է 11-13-րդ դարերի հայ-վրացա-

կան գիտական, գրական եւ պատմամշակության հարաբերությունները: Ընդհանուր առ-



մամբ անդրադարձ է կատարել նաեւ Վերոնշյալ դարերում գիտական ասպարեզ իշած հայ վարդապետների գործունեությանը:

Դետագուտությունն անհասանելի էր վրաց լեզուն չիմացող հայագետներին, մինչդեռ Նրա թարգմանությունն ու հրատարակությունը թույլ կտան արժելու հայ-վրացական պատմագրական և վաճառական նվաճումներից մեջը:

«Հայոց նոր վկաները» (1155-1843) Նշանավոր Ժողովածուի գրաբար ընագիրը կազմվել է Գետրոգյան հոգեւոր ճեմարանի ժամանակի դասախոսներ, հայագետներ Յակոբ Մանանդյանի և Յրայա Անապահանի աշխատափությամբ: Նրանք սուրբ Նահատակների վկայարանություններից մեջը բաղել են ծեռագրերից, «Յայսմատուրը»-ներից, պատմիների աշխատություններից եւ հրատարակել 1903-ին Ս. Եջ-

միածնության համար ավելի քան 140 նահատակվածների վկայարանությունները: Ներկայացված նահատակները, ենթարկվելով սարսափելի տանչանքների, վահճանակվել են բարի խոստովանությամբ ի թրիստու:

Արժեքավոր այս գրքը աղոթում անստվեր աշխատավոր ապագայի երանելի բարձունքներում՝ արդարության, ներողամտության ու ամենաշատ սիրո ու անման հավատի մեջ:




ՀԱՅՈՑ ՆՈՐ ՎԿԱՆԵՐԸ
(1155-1843)



«Երանի այն մարդուն, որ կլսի Ինձ,
եւ այն մարդուն, որ կսահի իմ ճա-
նապարհիմերը...» (Առակ. ԼԴ 34):

(Առակ. ԼՂ 34):

Սուրբ Գիրքը՝ գրված Աստծոն շնչով,
Երկնային ծագում ունի, որը պայմանա-
վորում է Նրա անառարկելի հեղինակու-
թյունը, մյուս բոլոր գրեթեից տարբեր լի-
նելին ու հարատեսությունը. «Երկինք եւ
Երկիր պիտի անցնեն, բայց իմ խոսքերը



չպիտի անցնեն» (Սատթ. ԻԴ 35): Աստ-
վածաշունչ մատյանում գտնում ենք մեզ
հուզող գրեթե բոլոր հարցերի պատաս-
խանսերը, և կատում մարդ-կատված եւ
մարդ-մարդ հարաբերությունների նրբե-
րանգները, ծանոթանում այս կամ այն
պատմական անձի կյանքին ու գործու-
նեությանը, արդարամտության, բարե-

Ակիզբը՝ թիվ 14

Ե. Աղջատնե՞ր, ընդունե՞ք
Նրան իբրեւ ձեր տնակցի եւ սե-
ղանակցի: Ծառանե՞ր, ընդունե՞ք
Նրան իբրեւ հանգիստ ամենօ-
րեայ սպասաւորութիւնից: Յա-
րուստնե՞ր, ընդունե՞ք Նրան, որ
կրծշկի ձեզ յագեցութեան
վեսաներից, եւ ընդմիջումը վա-
յելչական կդարձնի սովորական
եւ արհամարհելի դարձած [կե-
րակուրը]: Յիւանդնե՞ր, ընդու-
նե՞ք մօրն առողջութեան: Առողջ-
նե՞ր, ընդունե՞ք ձեր առողջու-
թեան աահաաաակին:

Հարցորդ՝ բժիշկներին, եւ կպատմեն թեզ, որ ամենավատ բանը մարմնեղ լինելն է, ուստի հմտագոյնները պահքի միջոցով վերացնում են աւելորդ [քաշը], որպեսզի մեծ ծանրութիւնը չխորտակի գօրութիւնը: [Եւ] որովհետեւ ուտելիքի կարօսութեամբ ոչնչացնում են չափո գերազանցող մասը, նոր [Եւ ճիշտ] աճի հևարաւորութիւն են ընձեռում սննդական ուժին: Այսպես ամենայն զբաղմունքի [Եւ] ցանկացած մարմնի համար օգտակար է պահքը եւ հարմար է ցանկացած վայրում], ցանկացած պահի՝ տանը եւ վաճառանցում, գիշերը եւ ցերեկը, անպատճում [Եւ] քաղաքում: Ուստի նրան, որ իրենով այսքան բարից է շնորհում, ընդունենք զուարծութեամբ, ըստ տերունական խօսքի. «[Երբ ծոմ պահեք], կեղծաւորի նման տրտմերես մի՛ եղեք» (հմմտ. Մատթ. 2. 16), այլ ցոյց տուեք անձնական՝ անկեղծ ուրախութիւնո:

Եւ իսկ թում է՝ ոչ այնքան
պահից յորդոր պիտի անեմ, որ-
քան պեսը է խրատեմ, որ որեւէ
մենա ասող ընկանի առեգու-

ՅՈՒՆԱ ԱՐՔԱՅԻ FURTOMUSI-USTR

պաշտության եւ խոնարհության դասեր քաղում... Այլ խոսքով՝ Կատվածաշունչը այս անփոխարինելի գանձարանն է, որտեղ յուրաքանչյուրս կարող ենք գտնել մեր հոգու սփոփանքն ու ներդաշնակությունը...

Ահա մի անդրադարձ հրեհց մանկահասակ արքայի կյանքին ու գործունեությանը...

Հրեաների թագավոր Սողոմոնի մահվանից անցնում է գրեթե երեք հարյուր տարի. Դավիթ եւ Սողոմոն արջաների հիմնադրած Երբեմնի միացյալ հզոր թագավորությունը բաժանվում է Երկու մասսի՝ Խորայել (հյուսիսային) ու Յուդայի Երկիր (հարավային): Յուսիսային թագավորությունը հետզհետեւ փլուզվում է հզոր Ասորեստանի հարձակումների հետեւանքով: Յարավային՝ լեռնային հատվածը, որը կոչվում «Յուդայի Երկիր», Վերջնականապես չի կործանվում ասորեստանցիների կողմից. Դավիթ արքայի ժառանգության այս փոքր մասն ընդունում է Ասորեստանի գերիշխանությունը եւ Վիթիսարի հարկեր Վճարում այս տերությանը:

Տարիների ընթացքում Հուդայի Երկրի բնակիչների դժգոհությունն ասորական լին դեմ աճում է, եւ ծավալվում են հակասորեստանյան ապստամբություններ: Կորեստանի հակառակորդ Եգիպտոսը քաջալերում էր այս հակառակությունը: Այդ տարիներին Հուդայի Երկրում թագավորում էր Ամոնը (քսաներկու տա-

բեկան էր): Նա տասներկու տարի գահակալում է Երուսաղեմում եւ իր հոր՝ Սանասեի նման չար ընթացք է ունենում Տիգրան

ող առջեւ, գնում է հոր մեղսալի ճանապարհով, Երկրպագում կուռքերին, լքություն հրացնելու հայրերի Տեր Աստծուն (հմմտ. Դ Թագ. Ի Ա 19-22): «ԱԱմոնի ծառաները Նրա դեմք դավ և յութեցին ու արքային սպանեցին իր տան մեջ, իսկ ամբողջ ժողովուրդը կոչուորեց բոլոր Նրանց, որոնք դավաճանեցին Ամոն արքային: Երկրի ժաղովուրդը Նրա փոխարեն թագավոր և ստեղծուեց Նրա որդուն՝ Յոսիային» (Դ Թագ. Ի Ա 23-24) Յոսիան Յուդայի Երկրի 16-րդ արքան էր (Ք. ծ. ա. 639-609 թթ.). Նա ընդամենը ուղարկած էր: Ըստ սուրբգրային Վկայությունների՝ Յոսիան մինչեւ բարեկույսան գերությունը գահակալած՝ Դավթի տոհմից սերած Վերջին բարեպաշտ արքան էր (Բ Մսաց. ԼՇ 1, ԼՇ. 1):

Բնականաբար, գահակալման սկզբ
նական շղանում երկիրը կառավարու-
էին մանկահասակ արքայի ինամակալ-
ները. Նրանք էին կայացնում թագավոր-
ության քաղաքական, տնտեսական
կրոնական կյանքին Վերաբերող որո-
շումները: Այս թագավորությունը շարու-
նակում էր մեծամեծ հարկեր վճարել Ա-
սորեստանին, ընակչությունը երկրպա-
գում էր հեթանոսական կուռքերին, հե-
տեւում գուշակներին ու մոգերին, մեծ
կարեւորություն էր տրվում աստղագու-
շակությանը: Ժողովուրդը հեռանում է
Աստծուց, եւ հեթանոսական չաստված-
ների ու կուռքերի պաշտամունքը աստի-
ճանաբար դուրս են մղում միաստվածու-
թյունը:

Յարկերն ավելանում են, երկրության խումբը են անարդարությունն ու քասությունը հիեանձերը հայտնվում են անհավատությունում:

թյան եւ մեղքերի անդունդում: Նովսիսկ Տիրոջ տաճարն է մոռացության մատն-վում. հատակը ճաքում է, որոյ հատված-ներ փլուզվում կամ քայքայվում են, ներ-քին փայլն ու գեղեցկությունը՝ խամ-րում... Երբեմնի հոյակերտ տաճարը խարխիվում է...

Սողոմոն արքայից հետո միայն Յուսիան է որոշում վերականգնել Տիրոջ տունը. Նրա գահակալման 18-րդ տարում դրամահավաքը է հայտարարվում ողջ Երկրում: Հավաքված գումարը տրամադրվում է տաճարի վերանորոգմանը (Դ Թագ. ԻԲ 3-8): Վերականգնման ընթացքում՝ Զ. Ճ. ա. 622 թ., տաճարում գիրք են հայտնաբերում. այն հանձնում են Քեղկիա քահանայապետին: Գրքի սկզբում գրված էր. «Սրանք են այն պատգամները, որ Մովսեսը տվեց բոլոր իսրայելացիներին Յորդանան գետի այն կողմում՝ անապատի արեւմտյան մասում՝ Կարմիր ծովի մոտ... Քառասուներորդ տարվա տասնմեկերորդ ամսվա առաջին օրը Մովսեսը բռլոր իսրայելացիներին ասաց այն ամենը, ինչ Տերը նրանց վերաբերյալ պատվիրել էր իրեն...» (Բ Օր. Ա 1-3): Քեղկիա քահանայապետը հասկանում է, որ դա Տիրոջ խոսքն է. այդ գրքում շարադրված են Աստծոն պատվիրանները, իրահանգները, որոնց վրա խարսխվում էր իրենց հավատքը: Մինչ այդ՝ տասնաբանյա պատվիրանները հիմնականում տարածվում եին բանակոր (իհարկե, գոյություն ուներ նաև Ուխտի տապանակը, որի վրա Մովսեսը փորագրել էր Տիրոջ պատվիրանները):

Ծարուևակությունը՝ Էջ 4

ԱՆԻՐՔ ԲԱՐԱԵԼԻ ԵՄԻՍԱԿՈՒԹՈՒՀ [ԵՐԿՐՈՐԴ ԲԱՌԸ] **Պահի մասին**

թեան չարիջի մեջ, որովհետեւ
պահեցողութիւնն ընդունում են
շատերը՝ Ե՛ւ ըստ սովորութեան,
Ե՛ւ իրարից պատկառելով։ Այլ եւ
երկնչում եմ արբեցութիւնից, որ
իբրեւ հայրենի մի ժառանգու-
թիւն պահում են գինեսերները, ո-

թեան, մերժումը՝ ցանկութեան չարխօսութեան, ստի, երդմ նահարութեան (Երդմնազանցութեան). սրանց բացակայութիւնն է ճշմարիտ պահը, [Եւ] այսպիսի սի երեւոյթներից գերծ մնալու բարի է:

A black and white photograph showing an open book with illustrations on its pages, resting on a small, ornate wooden stand. Two tall, thin candles are placed on either side of the book. The background is a dark, textured wall, possibly made of wood or stone, with some faint markings or carvings visible.

թեամբ ընթանալ առ Աստուած,
փախի՛ր արբեցութիւնից, որ այն
առաւել չհեռացնի թեզ Աստծուց:

Բայց Կերակուրեներից ձեռս-
պահ մնալը բաւական չէ գովելի
պահը համարուելու, այլ Եկե՛ք
Աստծուն հաճոյ եւ ընդունելի
պահեցողութեամբ զբաղուենք:
Ճշմարիտ պահը չարից օտա-
րանալն է, զապուածութիւնը լե-
զուի, արգելում սրտմտու-

Ները եւ ուսմունքները, որ ծառայում են մեր հոգիների փրկութեանը: Ի ծածով անցկացնենք պահքը (*հմտ.* Մատթ. 2. 4, 6. 18), որի համար Նաեւ մարգարէն է աղաչում՝ ասելով. «Տեր սովամահ չի անում արդարներին» (*հմտ.* Առակը Ժ. 3), [եւ] «արդարին արհամարհուած չտեսայ, կամ նրա զաւակին հազ մուրայիս» (*հմտ.* Սաղմ.

ტესტი აუგვისტოს დღეს მოხდება.

զուր, ալիքալիւսը սինթետի-

ՀՀ 25), որովհետեւ և իրական հացի կապակցութեամբ չասաց, քանզի գիտէր, որ մեր Յակոբ Նահապետի որդիները հացի համար Եգիպտոս գնացին (*հմտ. Ծննդ. ԽԲ. 2, ԽԳ. 2*), այլ հոգեւոր կերակրի առնչութեամբ, որ մեզ Ներքուստ կատարեալ է դարձնում: Թո՛ղ մեզ չպատուհասի սովոր, որն սպառնում էր հրեաներին. «Ահա օրեր պիտի գան,- ասում է Տերև Աստուած,- Ես սով պիտի ուղարկեմ այդ երկիրը, ոչ թէ հացի կարուութիւն կամ ջրի ծարաւ, այլ Տիրոջ խօսքը լսելու սով» (*հմտ. Ամովս Հ. 11*): [Եւ] սովն այս արդար Դատաւորն ուղարկեց, որովհետեւ տեսաւ, որ նրանց մտքերը ճշմարիտ աւանդից սովահեղձ են, իսկ արտաքին մարդո՞մ արոմնեղ եւ գիրազեավ:

Գալիք օրերին՝ բարօր առաւտներն ու երեկոները մեզ կկերպիր հոգին սուրբ: Թո՞ղ ոչ ոք կամովին զգրկի իրեն հոգեւոր խրախնաճից: Ամենօք ճաշակենք գիլեզուրկ գալաթից, որ իմաստութիւնը հաւասարապէս բաշխեց մեզ, որպէսզի հրաքանչիւնը ընդուՆի՝ որքան կարող է, որովհետեւ՝ «խառնեց, պատրաստեց գալաթը, պատրաստեց նաեւ իր սեղանը» (հմ/Մտ. Առակը թ. 2), այս է հասունների կերակուրը, որ «չափահաս լինելու շնորհիւ վարժ են լաւը եւ վատը որոշելու հարցում» (հմ/Մտ. Եբր. Ե. 14): Առատապէս յագենալով [պահքի] բարիքներով՝ արժանանանք ուրախութեանը հարսանեաց մեր Տեր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի, որին փառք եւ զօրութիւն. ամեն:

«**S**ուն եւ ընտանիք մի փոքրիկ թագաւորութեան երկիր ու սահման է. որոյ նահապետական արռողին վերայ կը նստին ծնողը. հայրն իբրեւ թագաւոր, եւ մայրն իբրեւ թագուհի. եւ կը կառավարեն հպատակ ընտանիքը. սոյն ընտանելակ պալատին ու թագաւորութեան մէջ ոչ ոստիկան կայ, ոչ սուր, ոչ բռնուրին, ոչ զաւազան. այլ ամենուն տեղ հայրական սէր եւ մայրական գորովն է...»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԻՄՆԱՐԱՐ ԱՎԳՈՐԻՍՏՐԱՆ

Ա. ԽՐԻՄՅԱՆԻ «ԴՐԱԽՄԻ ՇԱՏԱՌԻՔ» ԵՐԿՈՒ

«գաղափարի եւ ազատության շահակիր», իր «Դրախտի ընտանիքը» գրքում (առաջին անգամ հրատարակվել է Պոլսում, 1876թ.) հիմանալի ու հասկանալի կերպով Նկարագրում է դաստիարակությունը ընտանիքում (նրա գրքին են պատկանում նաեւ դաստիարակչական-բարոյախրատական ընույթ ունեցող նշանակալի եւ կարեւոր՝ «Սիրաք եւ ՍամՎել», «Պապիկ եւ Թոռնիկ» աշխատությունները):

Ամուսնության, ընտանիքի թեմայի հետ կապված՝ կանանց եւ տղամարդկանց իրավունքների, սեռական կյանքին եւ այլին վերաբերող բազմազան ու բազմաթույթ հարցերի կողքին առավել կարեւորություն ունի նաեւ Երեխայի դաստիարակությունն ընտանիքում, ինչը հաճախ ետին պլան է մշկում՝ աշօրյա, նյութական եւ այլ ինտիւների պատճառով, մինչդեռ խիստ կարեւոր է ընտանեկան դաստիարակությունը։ Մանկավարժական գիտությունների բազմացույթ համակարգում մի հասուկ բաժնն, որն է ընտանեկան դաստիարակության մանկավարժությունը, ուսումնասիրում է ընտանիքի մանկավարժական ներգործության օրինաչափությունները։ Չեխ մեծ մանկավարժ Յան Կմոս Կոմենսկին (1592-1670), մեծ տեղ հատկացնելով ընտանեկան դաստիարակությանը, մանրամասն անդրադարձել է դրա Էությանը։ Նա նոյնիսկ ծնողների համար առաջարկել է կազմել է մի ձեռնարկ՝ «Սայրական դպրոց» անունով։

Յայ գորղներն ու լուսավորիչները (Ռաֆֆի, Խ.Աբրովյան, Ն. Ծնորհալի, Մխիթար Գոշ, Գր.Տաթեւացի, Խրիմյան Յայրիկ եւ այլք) եւս տարրեր ժամանակաշրջաններում հասուն ուշադրություն են դարձրել ընտանեկան դաստիարակությանը՝ այն համարելով երեխայի ծեւավորման, զարգացման ու սեփական դիմագծի դրսեւուման հիմքը, քանզի ընտանիքն այն միջավայրն է, որտեղ առաջինն է մուտք գործում երեխան, եւ որը նրա զարգացման եւ կայացման գործընթացում անփոխարինելի դերակատարում ունի:

Հայոց Եկեղեցու ականավոր հայրապետ-Ներից Մելքը՝ Սրբտիշ Ա Վանեցի Խրիմյանը (1820-1907), ով ժողովրդի կողմից սիրո, հոգատարության, հայրական գույքի համար մեծարվել է «Հայոց» մականվամբ, իսկ Սիամանքանի կողմից ընդորուվել որպես



თანხელას դასტიარაկოւრეული

Խրիմյան կաթողիկոսի խրատներն ու հորդրուները հիմնված են այնպիսի սկզբունքների ու արժեքների վրա, որոնք երբեք չեն հևանում եւ արդիական են նաեւ այսօր իսկ կրոնի եւ աստվածաշուրջան դասեւ որը դժվարին եւ անըմբռնելի էն, այլ հասուն մանկական պարզ մտքին, ինչի հաստատության մաս համար վկայակողութ է Մատթեոսի Առաքելության վետապահ խոսքերը. «Գոհություն եւ հայտնութ օթզ, Յայր, որ ծածկեցիր այս բանը իմաստուններից ու գիտուններից ու հայտնեցիր մանուկներին» (Մաթ. ԺԱ 25):

Դաստիարակության հասանելիության ու
մատչելիության առիթով կրիմյան Յայրիկը
գրում է. «Ծնողական դասերուն մէջ ճար
տարիախօսութիւն, փիլիսոփայութիւն բնա
պէտք չունի. հապա զիշանելով՝ մանկա
կան հասակին համեմատ հարկ է պարզ
ընտանի եւ սիրալիր խօսքերով աւանել
կրթութիւնը...» (Եջ 169):

Ըստ Խոհման Հայրիկի՝ քաղաքակիրթ ժողովուրդը երեք քառերով է վարում իր ընտա-

Նեկան կյանքը՝ ուստιւ, դաստիարակություն, տնտեսություն։ Դրանք միմյանց շաղկապելով՝ նա գրում է. «...Կասն զի ուսման լուսով հաց կը գտնեն, դաստիարակութեամբ հոգին ու սիրու կրթելով քարի ընտանիք կը կազմեն, տնտեսութեամբ հացին սեղան եւ այլ կեանքի պիտոյքըները չափով ու կշռով կը մատակարարեն միշտ հոգավոր ապագայի անստոյդ օրերն...» (Եջ Ժ2): Վերջին միտքն արտահայտում են նաև մանկավարժ հեղինակները. աճող սերնդի տնտեսագիտական դաստիարակության հարցերով գրադպել են Լուսաշարսկին, Մակարենսկոն, Կրուպսկայան եւ ուրիշներ, որոնք իրենց աշխատությունների ենթատեքստում պահանջել են սովորողներին տալ տնտեսագիտական գիտելիքներ. սրանք յուրացրած սովորողները դաստիարակվում են ինսայողության, կարգասիրության եւ գործնականության զգացմունքներով:

Նրիմյան Յայրիկը գովում է այն եռանդ, որով ժողովուրդը ճատում է քաղաքակրթության ու արաշադիմության, բայց սխալ համարում այն ըրբնումը, ըստ որի՝ գեղխությունն ու Նորասիրության բուռն տեևչանքը համարում են ճշմարիտ քաղաքակրթության և մանությունը:

Անդրդասանալով՝ դաստիարակության կարեւոր բաղդրիչներից են Մեկին՝ բարոյական դաստիարակությանը, այս բնեցնելով ընտանիքից՝ հայրապետը գրում է. «...Ժողովուրդ եւ ազգերո միայն հացով չեն ապրիր. թագաւորութեամբ եւ ազատութեամբ չեն բարձրանար, այլ առաւել բարյական կենաքով. եւ այդ կենսական կեանքը տուողը ընտանիքն է...» (Եջ 44): Բարձրացնելով ընտանիքի դերը՝ կաթողիկոսը վստահ նշում է, որ ժողովուրդն ընտանիքից է առնւմ իր բարյական կյանքի տիպարը. «Ժողովուրդը ուորը եւ պետութեանց գահերը նորա Վերայ դրուած են. Եթե՛ քանորդի այս պատուանդամը՝ ժողովուրդ եւ գահերը միասին կը տապալին....» (Եջ 42):

Հարուսակելի
Աստղիկ ԱՎԵՏԻՍԻՍՅԱՆ

Սարգիս Վարդապետ և գիտեական Շնորհալու Գրիգոր Պահլաւունուց ուղղուած թուղթը տահրի մասին



Կորոս Տեառնեղբայրը, [ինչպես] Եւ
Յօր առաքեալներից այլք սահմա-
Նեցին Աղուհացից պահըք [...]: Եւ
այս օրերը, որ սկզբնապես պահել
էին, դրանք հրամայեցին ամենայն
տարի անխափան պահել:

Իսկ միւսներն ասում են, թե երբ
Կոստանդիանոսը հաւատքի եկա,
Սեղբեստրոս Յօհոմայեցին հրամա-
յեց Եօր օր պաս պահել: Եւ աս են

առաջին պահը համարում [...] Եթե բազում չարչարակներից յետոյ Սուրբ Գրիգորին Յայոց արքայ Տրդատը նետեց խոր [Եւ] դժողակ վիրապը, թագաւորին պատուիհաւեց ամենակալան Կստուած. Տրդատը կենդանական տեսք ստացաւ, դարձաւ տղմասէր խոզ Եւ խարօնելով՝ դեւերից՝ Եղեգին

շամբերում էր բնակում: Իսկ մարդասէրն Աստուած գթալով հրամայեց Գրիգորին հանել անտառելի վիրապից: [Եւ Գրիգորին] աղեք սական աղօթքներով հայցում էր Աստծու գթասրտութիւնը: Եւ Աստուած լսեց աղօթքը: Եւ [Գրիգորին] սկսեց ուսուցանել Նրանց ճշմարիտ հաւատքը, Եւ [պատուիրեց] հեռու մնալ սնոտի կուտքերից Եւ ծառայել Կենդանի Աստծուն փրկութելով անչեզ հրից: [Եւ Գրիգորին] այս ուսուցանեց Նրանց վախուն օր, Եւ զգաստանալով Նրանք ճանաչեցին իրենց Արարտին Եւ լուսաւոր մկրտութիւն Խնդրեցին: Եւ [Գրիգորը] մկրտեց Նրանց ի Յայր Եւ ի Յոգին Սուլը Եւ հաստատեց ճշմարիտ հաւատքը

Ղան Շնորհալու՝ ԱԼԵՆԻ ԴՐԻ ՄԱՍԻՑ

Իսկ բազում ժամանակ անց՝ նոյն ամսությ պահի շաբաթ օրը Սուրբ Սարգիսի Նահատակութիւնը եղաւ. Հայոց արքան վախճանուելու էր, եւ զօրացել էր բռնակալութիւնը պարսից Յազկերու ամբարիշա թագաւորի: Իսկ յունաց թագաւորը էր Թեոդոս Փոքրը: Արանց օրերու եղաւ Նահատակութիւնը Սուրբ Սարգսի՝ Վրտաշատ քաղաքի [Մերձակայքում]: Դուիկում: Եւ մենք այս օրը տօնում ենք յիշտավակը Նրա մարտիրոսութեան եւ չենք ասուած թէ պահը Է[...]: Գրեցիք, որ Աղոյի հացքի առաջին շաբաթն ենք նուիրում պահեցողութեանը, եւ այս օրինակով իմացիր կարգը, այս է աւանդութիւնը Մեր ազգի, իսկ [Միև բացատրութիւնները, որ] առասպելաբանութիւն են, չենք ըստ դունում: Եւ [Վրտաշաւորացի կապակցութեամբ] այսքանը բաւական է իմաստունիդ:

Իսկ ինչ վերաբերում է Պահրուտությանը, թէ ինչո՞ւ են յոյները Պահրուտության պահում, եւ հայերը՝ ոչ

մենք այս պատճառը գտանք ազգութեամբ յոյն թէոդորոս Իմաստասէր գիտնականի գրուածքով։ [Եւ] այսպէս էր [գրուած]։ «Երբ վախճանուեց բարեպաշտ Կոստանդիանոս Մեծը, Նրա Կոստան Եւ Կոստանդ որդիներից [Խարիսներ] յետոյ թագաւորեց ամբարիշ Յուլիանոս [Ուրացողնը], որ հեռացաւ Քրիստոսից Եւ սկսեց կուռքերը Երկրպագել Եւ զին մատուցել դեւերին։ Նաեւ կամեցաւ դեւերին [Մատուցուած] զոհերից գաղտագոյի ճաշակեցնել Քրիստոնեաներին ու [Նրանց] հաղորդ դարձնել դեւերին։ Եւ հաւատացեալներն իմանալով՝ հեռու Եին մնում ցանկացած մարդուց, որ ամբարիշ Յուլիանոսի կողմից չմեղադրուեն, թէ՝ «Ինչո՞ւ չեք ուսում զոհերին [Մսից], որ ուսում Եմ Ես»։ Ուստի հաւատացեալները միայն հաց ու պանիր Եին ուսում [այդ ժամանակ], իսկ Երկրորդ շաբաթը ծոմ պահեցին, Եւ թագաւորի խորամանկութիւնը ճախողուեց։ Իսկ նա պատերազմի գնաց ընդդեմ պարսից, Եւ երբ Վերադարձաւ, աւերելոյթ հարուածեց Նրա սրտին, Եւ [Ամբարիշն] անմիջապէս սատկեց։ Այդ Եր պատճառը, որ Եւ ասացինք, բայց Եթէ մէկն իմաստասիրաբար քննի իրերը [Եւ այլ տեսակետ յայտնի], մէնք չենք վիճի, որովհետեւ հայց ազգի պարագային Պանրուսոյ պահենու աւանդութիւն չգտանք։


Իսկ Աղոյիհացքի մասին հարցը եղին, թէ ինչո՞ւ ոմանք չեն ուտում: Եւ այժմ ասեմ պատճառը:

Հարուսակելի Գրաբարից փոխադրեց Գետրգ ՄԱԴՈՅԵԱՆԸ

Սկիզբը՝ թիվ 14
1930-ականների սկզբին «Գիրք
անապարհի» ժողովածուում
ապված քայլակներից մեկում
երյանի՝ իր ուսուցիչը լինելու ըս-
տունելով («Դու Stերյանից սովո-
ւեցիր լսել տրտունջը ոգու»՝
ոռսաստվածել է, թե հիմա էլ «Թու-
անյանի հուրևն է աշշեց քո կրա-
ք բորբոքում»: «Յմուտ, հանճա-
ռադ Լոռեցուն» ևա մեծարել ու
թուժեւորել է հենց առաջի ու թե-
սպիր խօսքի զորոպեյուն ունե-
ող քայլակներով՝ «Նա մեծ էր
ողով, արյունով», «Նա մեծ էր ա-
շելի, քան եղավ», «Ես կարդում
Նրան եւ ասում», «Թումանյա-
ն երգերը կարդալիս միշտ ես»
և այլն, իսկ չարեցնյան բեյթերից
եկը, որ դագելի «արքայական
ուն» է կամ քայլակի առաջին
կտոր կեսը, դարձալ ավար-
ուուն ինքնուրույն քանաստեղ-
ություն է եւ թումանյանական
անճարի անվերապահ ու աներ-
ումաստ գնահատականը.

Կա Մեծարենց, կա Տերյան, եւ
բազում ուրիշ պուտներ կան,-

ԵՐԱՎՅՈՒՄ ՔԱՌՅՎԿԱՆԵՐԻ ՎԵԽՎՐՃ



Կատար ժողովածու ութ հատորով, ՀԽՍՀ ԳՎ իրատ., հ. 2, Եր., 1948, էջ 189): Այսինքն՝ Արովյանը հստակ գիտակցել է այդ ժանրածեսով թուրքալեզու ար-վեստի դեմ պայքարի անհրաժեշտությունը, իսկ Նրա բուն նպատակը հայ երգի ու բանաստեղծության հեղինակության բարձրացումն էր, մայրենի լեզվի լիակատար տիրապետության հաստատում:

Արովյանից հետո հատ ու կեսն քայլակներ գրել են Յովի. Յովի հանձնաւանը, Ավ. Խահակյանը, Վ. Տերյանը, «Գարուն» խորագրով քայլակների մի ամբողջ գիրը 1919 թ. հրատարակել է Դ. Դեմիրճյանը, «Ռուբայաթ» եւ «Գիրը իմացության» խորագրերով մի պատկառելի քանակություն (շուրջ 80) ստեղծել է Ե. Զարենցը. իր գրական ճանապարհի տարբեր շրջափուլերում քայլակներ գրելու հետաքրքիր փորձեր հետագայում արել են նաև Նորարարական մեծ ու արմատական որոնումներ հրականագործ

Պ. Սեւակը, ինչպես նաեւ Յ. Սահյանը, Լ. Դուրյանը, Լ. Սարգսյանը, Վ. Խաստուրը եւ ուրիշներ:

Ահա կանգնած ենք շիրազյան
քայլակների մի ամբողջ՝ ըստ ա-
մենային հարուստ աշխարհի ա-
ռաջ: Ինչպես ցոյց է տալիս վե-
րեի համառոտ վիճակագրու-
թյունը, քայլակի ժանրը կամ քա-
նաստղձական այդ տեսակը հայ-
դասականներից փաստորեն ա-
մենից շատ եւ հետեւողականու-
րեն գործածել են Ն. Թուզակը (Ե-
թե քառատող հայրենները քա-
յլակ հաշվվեն), Խ. Արովյանը
Յովի, Թումանյանը, Ե. Զարենցը
եւ Յովի. Շիրազը:

Վերջինս նույսպես, գիտակցելով այդ ժանրածելի կառուցվածքային յուրահատկությունները կարճ ծավալով չափածո խոսքի մեջ բովանդակային մեծ խտացումներ ամփոփելու արվեստի նրբություններն ու բարդությունները, տաղաչափական այդ ծելթելադրած բովանդակային առանձնահատկությունները, իր մեծ և սահողողների աես ռարաւակ

ԱԵՐԻ ԳԵՐԱԿՂՋՈՂ ՄԱՍԾ ԵՒ ԼԱՎԱ
ԳՈՎԱՆԵՐԸ ԳՐԵԼ Է ՍԱՏԵՂՋԱԳՐԾԱ
ԿԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԲԱՐ ՀԱՍՈԼ
ՏՈՐԻՔՈՒՄ: Նա ԵԼ, ՉՈՏԵՐԻ պԵՏԱ
ՔԱՆՅԱԿՈՎ ԻՐԱՊՈՒՐՎԵԼ ԵՒ ԳՐԵԼՈ
ՎԻՌՈԴԵՐ ԱՐԵԼ Է ՊԱՏՈՆՈՒԹՅԱՆ
ՈՒ ԵՐԻՇՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՏՈՐԻՑՆԵ
ՐԻՆ՝ 1930-50-աԿԱՆ ԹԹ., ԵՐԵ ԳՐԵ
Է ԻՐ ՔԱՐԱՐԱԿԱՆ ԼԱՎԱԳՈՆՆ ԲԱ
ՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ պԵՏԵ
ՆԵՐԸ ԵՒ ՍԱՏԵՂԾԵԼ ԻՐ հԿՈՐ պՈԵ
զԻԱՆ: Բայց Եթե ԽԱՋՅԱՄԻ կԱՍ
ԶՈՒՅԱԿԻ պԵՏ ՄԻՄԻՅԱՅՆ քԱՆՅԱԿ
ՆԵՐ ԳՐԱԾ լինԵՐ, ԴՊՐՋԱԼ պԻՄԻ
ՆՐԱՆ ՀԱՄԱՐԵՒԽԸ մԵՐ մԵԾ բԱ
ՆԱՍՏԵՂԾՆԵՐԻց մԵԿՐ:

Հայ քայոյակագրության մեջ Յովի. Թումանյանի ամենամերժ ծավոր գրական նախորդը և. Առովյանն էր իր բայաթիներով իսկ նրան էլ նախորդում էին հայ կական ժղովրդական խաղիկներն ու քուչակյան հայրենաերը պարսիկ մեծ քայոյակագիրների աստղաբոյլը: Այսինքն՝ Թումանյանի եւ նրա նախորդների միջեւ, հոգեբանական հարազատությունից անկախ, ժամանակատարածային իմաստով բավական մեծ հեռավորություն կար: Իսկ Յովի. Շիրազի անմիջական նախորդները, հետադարձ հաջորդականությամբ, Եջարեւոցն ու Յովի. Թումանյաննեին, գրեթե մերձավոր գրական սերունդներ, որոնք, սակայն տարբեր եին պատմական վիթխարի իրադարձություններու հարուստ ու հարափոփիս արագաթորհ ժամանակով, իրեւն մարդկային նկարագրով ու գրողական խառնվածքով: Սակայն Յովի. Շիրազը հոգեբանորեն եւ ազգային գեղարվեստական մտածողության ավանդույթներով ավելի շատ խաղիկներին ու հայրենաերին, արովյանական քայաթիներին, Թումանյանի ու

ηηψρηθακαν τωρερρεψήν, Σηρανσ
կենսափիլխոփայության Էր
կապված, քան իր անմիջական
հանճարեղ ևախորդի հեղափո-
խական, միջազգային ու համաշ-
խարիկ սավառնումներին: Ու
թեեւ Հովհ. Շիրազը երկու հան-
ճարետրին էլ սերտորեն առնչ-
վում էր գրական ազգակցու-
թյամբ ու ժառանգորդությամբ,
այսինքն՝ մարդու եւ բնության,
հայության եւ մարդկության հա-
րաբերությունների, մեր ժողովր-
դի հարատեւման՝ «ովքե՞ր Ենք
մենք, որտեղից Են գալիս եւ դե-
պի ո՞ւր Ենք գնում» խորենացիա-
կան ճակատագրական հար-
ցադրման ընկալման ու գեղար-
վեստական մեկնության ընդ-
հանրության իմաստով, ապա
միեւնույն է, Նրանց միջեւ առկա
էին ստեղծագործական անհա-
տականությունների ու գրական
դպրոցների եւ գեղարվեստական
մտածողության ակնառու եւ եա-
լաւ լրացրեցաւը ունեցաւ:

Ամենից առաջ առկա էր Յովի. Թումանյանի բանաձեւած ժամանակների եւ հանգամանքների տարբերությունը, որ իրենցից՝ գրողներից չեր կախված: Թումանյանը, իր իսկ բնորոշմամբ, ապրել եւ ստեղծագործել է ինից նորին անցման դարաշրջանում կամ «Երկու դարի ու Երկու քարի»՝ «նոր ընկերի ու իին ցարի արանքում» (եւ ոչ թե ցավի, ինչպես «Խմբագրում» էին նրան խորհրդային հրատարակիչները) կամ Տերյանի ու Չարենցի ընորոշմամբ՝ «Երկու աշխարհի սահմանագում»: Չարենցին ինքը ստեղծագործել է Առաջին համաշխարհային պատերազմի ու հեղափոխության դարաշրջանում եւ սոցիալիզմի առաջին տասնամյակներում, իսկ Յովի. Շիրազի ողջ ստեղծագործական կյանքն է կապված խորհրդային տասնամյակների, Երկրորդ համաշխարհային պատերազմի ու սոցիալիզմի դարաշրջանի հետ:

Ծարուևակությունը՝ Էջ 5

ՅՈՒՆԱ ԱՐՔԱՅԻ FURTOMIUNIULTR

հոգու մեջ...» (Բ Օր. 2 4-7): Այ-
դուին ծիսապաշտամունքային
արարողությունները պետք է
կատարվեին Երուսաղեմում՝
Տիրոջ տաճարում. սուրբ
քաղաքը հաստատվում
է որպես թագավորու-
թյան կրօնական-հո-
գեւոր միակ կենտ-
րոն: Արքայի հրա-
մանով Տիրոջ տա-
ճարից դուրս են բե-
ռում եթևալուսական

յուս ովաճառական կուրքերը եւ դրանք այրում Երուսաղեմից դուրս գտնվող Կեդրոնի դաշտում: «Նա այրեց քրմերին, որոնց հաստատել էին Յուդայի Երկրի արքաները, որովհետեւ սրանք բարձունքների Մեհյան-ներում, Յուդայի Երկրի բոլոր քաղաքներում ու Երուսաղեմի շուրջը խունկ էին ծխում...» (Ղ Թագ. հգ 4-

6): Աղապիսով՝ իրականանում է Սամեայի՝ Աստծո մարդու մարթունը. «Սեղան, ո՞վ սեղան, այսոսում Տերը. «Դավթի տակը Հոսհամ մի ոռոհ կծնվի. ևս թե մոհ կող-

Այս մասին տեղեկացնում է Հոսհային. արքունական քարտուղար Սափիանը արքայի համար ընթերցում է գիրքը: Հոսիան ուշադրությամբ լսում է. ահա՝ Տիրոջ կամքը՝ տասնաբանյա պատվիրանները, որուց հրեաները չեն հնազանդվել, չեն հետեւել դրանց եւ մոռացության են մատունք. «Արդ, Խորայե՛լ, լսի՞ր այս օրենքներն ու կանոնները, որ այսօր ուսուցանում են քեզ: Դրանք պետք է կիրառեք, որպեսզի ապրեք... Ոչ մի բար չավելացնեք իմ ասածին ու ոչ մի բար չկրծատեք դրանից: Պահպանեցե՛ք մեր Տեր Աստծու այն պատվիրանները, որ ես պատգամում եմ ձեզ...» (Բ Օր. Դ 1-2): Գրում պատգամ կար նաև կրօպաշտության, մոգության եւ գուշակության մեղքի մեջ խմորվածների Վերաբերյալ, որը շատ կարեւոր էր տվյալ միշավայրի համար. «Իմ աչքի առջեւ օտար աստվածներ չունենաս, Վերեւում՝ Երկնքում, Ներքեւում՝ Երկրի վրա, Երկրի տակ՝ ջրերի մեջ գոյություն ունեցող որուել առաջի կերպարանքով քեզ համար կուռքեր չշինես, դրանց չերկրպագես ու դրանց չծառայես, որովհետեւ ես եմ քո Տեր Աստվածու: » (Բ Օր. Ե 7,9):

Այս գիրքը հազարամյակի գտածոն էր, որը վճռորոշ Նշանակություն ունեցավ հիմնավոր բարեփոխումների համար. աստվածաբանության մեջ տարբեր տեսակետներ կան դրա բովանդակության վերաբերյալ: Ըստ Սուրբ Գրքի մասնագետների՝ խոսքը Բ Օրինացի մասին է: Գտնված սրբությունը, ասես, Մովսեսի հետմահու կտակն էր, որը ևաեւ կանխասացություն էր հրեա ազգի Եւ Նրա թագավորության հետագա ընթացքի վերաբերյալ: Մովսեսը պատգամում է Եբրայեցիներին ասացնել լինաւ Եւ ճշշմարի Կայութաւը. լույսայի երկրում կրկին հաստափում է Միաստվածություն՝ համաձայն այս խոսքերի. «Հսի՞ր, Խրայե՛լ, մեր Տեր Աստվածը մեկ Տեր է: Զո Տեր Աստծուն պիտի սիրես քո ամբողջ հոգով, քո ամբողջ ամբողջ ուժով: Այս պատկանողությունը եմ քեզ».

ծովն, պահ-
պանել
Նրա
պատվի-
րաները,
հետեւել Նրա
ճանապարհներին
**(Ա. Տօպալլեր, Զագադքի
բիблейской истории, Из-
раиль, 2006):**

Յոսիհա արքան լուրմ է
Աստծոն կանչը, ինազանդ-
վուրմ Նրա կամքին. այս ե-
րիտասարդ՝ տիրակալի
շանքերով երկրում իրա-
կանացվում են հոգեւոր-
կրոնական բարեփո-
խումներ: Նորոգվում
է Աստծոն հետ կնքած
ուխտը. Յուղայի
երկրում կրկին
հաստատվում է
Միաստ Վածու-
թյուն՝ համաձայն
այս խոսքերի.
«Լսի՛ր, իսրայե՛լ,
մեր Տեր Աստ-
վածը մեկ Տեր է:
Զո Տեր Աստծուն
պիտի սիրես քո ամ-
բողջ հոգով, քո ամբողջ եւ
ամբողջ ուժով: Այս պատզ
սոյ հառողողում եմ թե. ևս

հարերի մեհյանների քրմերին, որոնք քեզ վկա զոհ են մատուցում...» (Գ Թագ. ՏԳ 2):

Քանիվում են երկրի բարձրադիր վայրերում կառուցված թոլոր զոհասեղաններն ու մեհյանները, կրապաշտարանները, խորտակվում են արձանները: Տարածվում են ամրապնդվում է միաստվածությունը. Երկիրը մաքրվում է հեթանոսական բազմաստվածության եւ կրապաշտության մասցուկներից: Օրենքով խստիվ արգելվում է և ատել վիովների, գուշակների, մոգերի եւ աստղագուշակների գործունեություն:

Արքան պատվիրում է նաեւ նշել Զատիկը (Բ Մսաց. ԼԵ 1-19), որը վերածվում է համազգային տոնի: Թագավորաց Դ գիրը վկայում է, որ «Խորայելը ղեկավարող դատավորների օրերից սկսած, Խորայելի ու Յուդայի երկիրի թագավորների օրոր Նման զատիկ չէր եղել» (Դ Թագ. հԳ 22):

Յոսիայի հոգեւոր-կրօնական բարեփոխումները վճռորոշ դերակատարում են ունենում իրեաների ազգային ինքնագիտակցության ձեւավորման համար: Յուսիսային թագավորության՝ Կիրայելի անկումը համարվում է աստվածային պատիժ, որովհետեւ իրեաները հեռացել են

իրենց հայրերի Աստծուց, երկրապագել կուռքերին, լուսատուներին, զայթակովել գուշակությամբ, մոգությամբ եւ կախարդությամբ (Դ Թագ. ԺԵ):

